Արձանագրություն N 2

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/25ՏՀ ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

«03» «սեպտեմբերի» 2024թ.
ք. Երևան **Ժամը՝ 15:00**

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ՝ *(ԳՊ/ԳԱՊ)*՝ Վահե Աչոյան

անդամներ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ՝ (ԳՊ/ԳԱ)՝ Արամ Խաչատրյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)՝ Հրանտ Մինասյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Աստղիկ Խաչատրյան

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)՝ Գևորգ Խեչումյան

Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմակերպչական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)՝ Անի Բաղալյան

1. Տեղեկատվություն՝ ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/25ՏՀ ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

1.1 **ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/25ՏՀ** ծածկագրով բաց մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են **2024 թվականի օգոստոսի 9-ին՝ ժամը՝ 16:00-ին:**

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների գների վերաբերյալ

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	գնվելիք աշխատանքների կատարման համար գնման հայտով սահմանված գնման գինը /ՀՀ դրամ/
1	S-5-3,/Մ-7/ (Շիրակամուտ) -Գեղասար - /S-5-7/ ավտոմոբիլային ճանապարհի կմ0+000 - կմ 1+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ	3 336 743

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

3.1. Հայտեր են ներկայացվել հետևյալ մասնակիցների կողմից

N	**Մասնակիցների անվանումները**	**էլ.փոստ**
1	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	llcdorproject@mail.ru lil.poghosyan17@gmail.com
2	«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ	info@haldi.am
3	«Սուֆետ» ՍՊԸ	sufet16@gmail.com
4	«Միկան» ՍՊԸ	mikkar89@mail.ru
5	«Բլումինգ» ՍՊԸ	kostanyan95@mail.ru

3.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2024 թվականի օգոստոսի 26-ին 16:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ 0:

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Վահե Աչոյան** .....

Հանձնաժողովի անդամներ՝ **Արամ Խաչատրյան** .....

Հրանտ Մինասյան .....

Աստղիկ Խաչատրյան .....

Գևորգ Խեչումյան .....

Քարտուղար՝ **Անի Բադալյան** .....

26. 08.2024 թվականին, ժամը 16:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

Արձանագրվեց, որ հանձնաժողովի նիստն իրավազոր չէ, որի մասին գնահատող հանձնաժողովի քարտուղարը գրավոր զեկուցեց պատվիրատուի ղեկավարին և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով՝ այն է նիստն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, որը հետևյալ հաջորդականությամբ՝

ա. ոչ ավելի, քան երկու աշխատանքային օրով կասեցնում է գնման գործընթացը,

բ. ապահովում է տվյալ անդամի ներկայանալը հանձնաժողովի նիստին կամ տվյալ անդամի փոխարեն, պատասխանատու ստորաբաժանման առաջարկության հիման վրա, նշանակում է հանձնաժողովի նոր անդամ,

գ. սահմանում է նիստի անցկացման օրը և ժամը, որը չպետք է ուշ լինի գնման ընթացակարգի կասեցման վերջնաժամկետից.
Հաստատվեց գնահատող հանձնաժողովի նոր կազմ:

30. 08.2024 թվականին, ժամը 17:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետը՝ հանձնաժողովի կողմից նիստը համարվեց իրավազոր և սահմանված կարգով վարվեց հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն:

4. Տեղեկատվություն՝ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

4.1 Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

- «Բլումինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, որտեղ բացակայում էր Հրավերով պահանջված նմանատիպ պայմանագրի պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթղթի՝ համաձայնագրերի, պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթուղթի՝ ակտի, արձանագրության,հաշիվ ապրանքագրի պատճենները, ինչպես նաև մասնակցության հայտով պետք է ներկայացվեն անձնակազմի բոլոր անդամների կողմից պայմանագրի կատարմանը մասնակցության հավաստում:
- «Միկան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, որտեղ առկա էր անհամապատասխանություն մասնակցի կողմից կայտով ներկայացված Հավելված 2. 2-ում և բացակայում էին Հրավերով պահանջված նմանատիպ պայմանագրի պատշաճ ձևով իրականացրած լինելը հավաստող փաստաթղթի՝ հաշիվ ապրանքագրի պատճենները:

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին ծանուցումը ստանալու օրվանից մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

03. 09.2024 թվականին, ժամը 15:00-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

5. Տեղեկություն՝ ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/25ՏՀ ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման մասին

5.1 Ընդունել ի գիտություն, որ մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել են հայտերում առկա անհամապատասխանությունները:

6. Տեղեկատվություն՝ յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

6.1 Գնային առաջարկներ են ներկայացվել հետևյալ մասնակիցներ կողմից՝

Չափաբաժին 1՝ S-5-3,/Մ-7/ (Շիրակամուտ) -Գեղասար - /S-5-7/ ավտոմոբիլային ճանապարհի կմ0+000 - կմ 1+400 հատվածի հիմնանորոգման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայություններ

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	«Միկան» ՍՊԸ	1 600 000	0	1 600 000
2	«Բլումինգ» ՍՊԸ	2 000 000	400 000	2 400 000
3	«Հալդի Քոնսալթ» ՍՊԸ	2 450 000	490 000	2 940 000
4	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	2 665 000	533 000	3 198 000
5	«Սուֆետ» ՍՊԸ	2 750 000	550 000	3 300 000

6.2 Մասնակիցների հայտերի հաշվարկման ճշգրտությունը (տառերով, հայտում ներկայացված հայտերի համարներին արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկի թվաբանական ճշգրտությունը համապատասխանում են (ճիշտ են):

7. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/25ՏՀ ծածկագրով բաց մրցույթի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակից ճանաչել «Միկան» ՍՊԸ-ին:

7.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել **ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-2024/25ՏՀ** ծածկագրով բաց մրցույթի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

7.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

7.4 Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Միկան» ՍՊԸ-ին:

8. Տեղեկատվություն՝ կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և

Խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

8.1 Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

9. Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

9.1 Մասնակիցների կողմից հրավերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Վահե Աչոյան** .....

Հանձնաժողովի անդամներ՝ **Արամ Խաչատրյան** .....

Մանե Մալխասյան .....

Խորեն Ասատրյան .....

Գևորգ Խեչումյան .....

Քարտուղար՝ **Անի Բաղալյան** .....